

## ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2012թ. նոյեմբերի 12-16-ը ՀՀ ԱՎԾ-ում էին ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության /ՊԳԿ/ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տարածաշրջանային վիճակագիր և գենդերի գծով պատասխանատու Սալար Տայիրը, նույն գրասենյակի գենդերի գծով միջազգային փորձագետ Վալերիա Ռոկան և ՄԱԿ-ի ՊԳԿ-ն գլխադասային գրասենյակի հաշվառման վիճակագիր Գեորգի Կվինիկադեն ՄԱԿ-ի ՊԳԿ «Աջակցություն գյուղատնտեսության համատարած հաշվառմանը ՀՀ-ում» ծրագրի շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների հետ հանդիպելու և գյուղատնտեսական համատարած հաշվառմանը վերաբերող հարցերը քննարկելու նպատակով,
- ✓ 2012 թ. նոյեմբերի 19-23-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության բիզնեսի զարգացման բաժնի գլխավոր խորհրդատու Մարտին Լունդոն և Շվեդիայի վիճակագրական ծառայության բաժնի պետ Ինգրիտ Պերսոնը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հանրության վիճակագրություն» ծրագրի ներքո,
- ✓ 2012թ. նոյեմբերի 26-30-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության արտաքին առևտրի և վճարային հաշվեկշռի բաժնի պետ Սորեն Շյոնինգ Անդերսենը և տվյալների հավաքագրման և մեթոդաբանության բաժնի պետ Կարսթեն Զորնինգը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Բիզնես վիճակագրության կատարելագործում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. դեկտեմբերի 3-7-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Լիտվայի վիճակագրական ծառայության գների բաժնի ղեկավար Նադեժդա Ալեյան և Դանիայի վիճակագրության ծառայության գների և սպառման բաժնի պետ Կիրսթեն Բալլինգը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական

ծառայությանը» պայմանագրի «Հարմոնիզացված սպառողական գների հնդեքսի ներդրում» բաղադրիչի շրջանակում,

- ✓ 2012թ. դեկտեմբերի 10-14-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության տնօրեն Լարս Թյուգեսենը, Բեռլին-Բրանդենբուրգի վիճակագրական ծառայության(Դեստատիս) մեթոդաբանության բաժնի ղեկավար Կաի Լորենցը, Ֆինլանդիայի վիճակագրության ծառայության գլխավոր տնօրենի տեղակալ Հիկկա Վիհավայնենը Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Որակի կառավարում» բաղադրիչի շրջանակում,
- ✓ 2012թ. դեկտեմբերի 11-14-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության ֆինանսների բաժնի պետի տեղակալ Անետ Թոմսենը և ազգային հաշիվների բաժնի պետ Օլե Բերները Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Ազգային հաշիվների համակարգի կատարելագործում» բաղադրիչի շրջանակում: